

րոյցի մէջ է, — մի բան որ անում է և հշտարը: Մ' ենք չպիտենք՝ լորենացու մէջ յունութքը — ու լունքներն ինչի են պէտք դպիսաւ Այսուհետեւ զրոյցի երրորդ մասն ևս չունի լորենացին: Զրագաշար Ասմիքասանի կողմանապեան է, որին հաւատում է Շամբրամը իւրիշնանութիւնը, այսինքն կառավարութիւնը նորսն է թօղնում: Նու ուզում է բռնանալի վերայ ամենայնի: Շամբրամ կռւում է նորահետ յաղթում է, փախչում է Հայաստանուոր ամառներն անց եր կացնում: և այսաեղ որպին սպանում է նորան: Մ' եռնելուց առաջ, ըստ առասպեկին, նա ուլունքները ձգում է ծովը: Խակ զրոյցի ծերունին երթեւեկութիւն ունի Շամբրամի մօտ, ամենայն իրաց նորահմուտ և իրը խորհրդական էր: այսինքն զիտերի որ Շամբրամն ուլունքների զօրութեամբ է չարութիւն գործում: Բարի ծերունին ժողովրդին ազատելու համար՝ խլում է ուլունքները ու փախչում: Շամբրամն ետեւից ընկում է, մազերը պարսատիկ շնուռ: և պոկում: Եւ այսպան միայն: Զրոյցից մենք մինչեւ անգամ որոշ չփատենք թէ արդեօք Շամբրամը մեռնում է թէ չէ: Մ' իայն նորա ուլունքները ծերունին ծովն է ձգում և ժողովուրդին ազատում է նորա մազական զօրութիւնից:

Ասել կարելի չէ թէ այս զրոյցը ստեղծուի և լորենացու մի խօսքի ազգեցութեան տակ թէ Շամբրամ վաւաշ է և թէ «Ուլունք Շամբրամայ ի ծով»: Այս նոյնպէս կարող է Արտամետում պատմուած Շամբրամի հին առապելի մացորդ լինել, ինչպէս լէզը Սուրբ թօնիքի առասպեկն է: —

Աւելորդ մի լինել վերջում նկատել, որ լորենացու բերած առասպելով Շամբրամի վախճանն ուրիշ տեսակ է լինում: Այսաեղ Շամբրամն իւր թշնամիներից հալածուած փախչում է, առասպելը պատմում է նորա «զհետեակ փախուան», և զպասցումն և զիդար ջրոյն և զարբումն, այլ և ի մօտ հասանել առևսերաւորացն, և զյուռութեան ի ծով: և բան ի նմանէ՝ ուլունք Շամբրամայ ի ծով: Այլ . . . . և Շամբրամ քար»: Շամբրամն ուրեմն իւր ուլունքները ծովը ձգելուց յետոյ քար և զառնում:

Մ. Աթեղեան.

## ՄԱՆՐԱԼՈՒԹԻՒՆ

Խօսող կապիկ: — Բալդիմորում (Հիւսիսային Ամերիկա) փորձ է արուած կապիկին խօսել սովորեցնել, Գրիգորիկոս Դ'Օստա: որ այդ փորձն անում է, յաջողել է մի կապիկի սովորեցնել, թէպէտ գեռ ոչ բոլորովին պարզ, անզիկերէն, մասմա: այս և ոչ բառերն արտասանել, Ա. Ժ. մ այդ կապիկը, որի անունը Խամբ է, սովորում է ձայնաւոր հընչիւններն արտասանել և խիստ յաջողութիւն է թոյց առլիո: քիչ դժուարութիւն է կրում բաղաձայն հնչիւններն արտասանելին: Կապիկը ձայնում է իւր ուսուցչի ընտանիքի հետ: սեղան նստելին առ իւր որոշ տեղն ունի և անվանիր ուսոււմ է տաճեատսակի կերակուր: Գիշերը կապիկը հանում է իւր շորերը, ինքը պառկում է մահճակալի վրայ և վրան վերմակ է առնում:

Արեադարձային երկրներում աւանդութիւն կոյց, թէ կապիկները խօսել կարող են և համբ են ձեւանում: որպէս զի մարդիկ նրանց չաշխատեցնեն:

\* \*

Երեք տարեկան առնապարհորդ: — Ամերիկայի թերթերը մի ժամանակ լցուած եին ոյն պատմութեամբ: թէ ինչպէս մի երեք տարեկան աղջիկ, Հեղինէ Գրանսիս, մեն մենակ ճանապարհորդել է Նիւևորքից մինչև Օկլագոմ (Հիւս. Ամերիկա): Երեխայի մայրը մնանում է, հայրը մտածում է որուկին ուղարկել պապի մօտ: բայց իւր գործերը չեն ներում, որ երեխային տանի տեղ հասցնի: Երեխային զնում է շոգեկառքի վագոնում, զգեստի վրայ մի յայտարարութիւն է կացնում: որի մի երեխն գրուած է լինում: անունն է Հեղինէ Գրանսիս: զնում եմ Օկլագոմ, Պապիս՝ Ֆեմ Լուիդարտի մօտ: սորուղ փողոց: յայտարարութեան միւս երեխն գրուած էր: «ինդրում են շոգեկառքի վարչութեան ծառայողներին և ճանապարհորդներին բարի և սիրալիր լինին գեպի մանուկը»:

Երեխայի հետ ճանապարհին բոլորը շատ լաւ էին վարուում և նա ամենայն յաջողութեամբ և անփորձութեամբ տեղ հասաւ:

\* \*

Հեղյ երերի հսկաները, — Հարաւային թեենը ճանապարհորդող բելգիական խմբի անդամներից մէկը՝ Գրիգոր Գրիգորիկոս Առևէ հետաքրքիր նկարագրութիւն է անում այն ամերիկեան հնդիկ հսկաների մասին, որ ապրում են հարաւային Ամերիկայի ծայրում: Մազեկանի նեղուցի մօտ:

Օնաները, այդպէս է կոչուում այն ցեղը, մինչև այժմ պահել են իրենց նախնական վայրենի

րնաւորութիւնը. շատ զարմանալի է, որ քաղաքակրթութիւնը գեռ չի հասել նրանց. Ամենայն հաւանականութեամբ նրանք պատկանում են զեղամորթ ցեղին. երբեք չեն ժողովուում մի իշխանաւորի հրամանի տակ՝ այլ ընդհակառակը բաժանուում են մանր խմբերի և յաճախ կրիւ են մզում իրար գէմ. նրանք բոլորը ճանաչում են մի ընդհանուր թշնամի՝ այդ ոսկի փնտողներն են, որ լուսել են նրանց երկիրը. Հսկաները ժամանակ առ ժամանակ յարձակուում են ոսկի փնտողների՝ եւրոպացիների արօտատեղիների վրայ. Թէպէտ նրանց ամրող զինավառութիւնը նետ ու աղեղն է, այնուամենայնիւ ամենայն համաձակութեամբ կոռուում են երրուց գէմ և երբեք թիկոննք չեն դարձնում նրանց հրացանների տեղացող գնդակի տարափի առաջալ.

Օնասները աշքի են ընկնում իրենց վիթխարի հասակով. միջակ հասակը մօտաւորապէս մի սաժէն է, յաճախ պատահում են սաժէնից մի քանի վերշկէ աւելի հասակով մարդիկ։ Նրանց թիւը մօտ 1600 է, բաժանուում են 16 խմբի. Կանայք այնպէս վիթխարի չեն ինչպէս այր մարդիկ, բայց նրանք էլ աշքի են ընկնում իրենց պինդ կաղծուածքով. Աշխարհում ոչ մի ժողովուրդ արգակն փարթամ կազմուածք չունի, ինչպէս Օնասները. Նոքա բացառապէս որսորդութեամբ են պարապում և բնակութեան համար ոչ տուն ունին, ոչ էլ խըրճիթ. ունին միայն մի քանի գաղանի մօրթի. որոնցով և պաշտպանուում են փոթորկից ու անձրենից.

\* \*

Վիճ գրուանիանց մարդ. — Մայիս ամսի վերջերին Ամերիկայից մի մարդ էր եկել Փարիզ, որ 5 դրուանքայ էր կշուում, թերթերի ասելով այդ թղուկը բաւական սիրուն կազմուածք ունէր և սովորական թղուկներին ոչնչով նման չէ. Հասակը մօտ 13 վերշկէ է, լաւ ուտում և օրական 5—6 դլանակ է ծխում, ուս ծնուել է Ռուսաստանում 1880 թուին, մազերը բաց խարսեաց գոյնի են, զլուկը բալորովին նման է նորածնի գլխին, թղուկը խօսում է մի քանի լեզուով բայց գերադասում է ուսւերենը։

\* \*

Ճափուացիմենի յաղախաւուրիւնը. — Ճափուացիմենի բարձավայրութիւնը վաղուց յայտնի է աշխարհին, Վերջին ժամանակներս ոստիկանական վարչութեան նոր հրաման ելաւ, թէ ոստիկանական ժառայութերը ինչպէս պէտք է վարուեն օտարականների հետ. Առաջին օրէնքն այն է, որ բարեկամական և քաղաքավարի վիրաբերմունք պէտք է դոյց տան այն ճանապարհուդներին, որ հեռու եր-

կըներից են զալիս. Ճափուացիում եղող օտարականներից շատ շատերը իմանում են աեղական լեզուն, և ոստիկանական պաշտօնեան պարտաւոր է այդ լեզուով ամենայն քաղաքավարական եւրոպականների միմեւ օտարականին, երբեք կոպիտ խօսք չպէտք է ասէ, քննութեան չպէտք է առնի օտարականի հագուստը, շարժուածքի ձեւերն ու վերաբերմունքը. որովհետեւ այդ բոլորը վիրաբերական եւ օտարականը, եթէ լեզու անգամ չիմանայ, կարող է հասկանալ վերաբերմունքի եղանակից, Պաշտօնեան պէտք է հսկի, որ ուրիշ մարդիկ էլ ըլվիրաւորնեն օտարականին. Նա երբ շուկայումն է, չպէտք է թոյլ տայ, որ ամբոխը խմբուի նրա շուրջը, Խթէ օտարականի շունը կորչի և յայտնի ոստիկանական պաշտօնեային, վերջինս պարտական է գանելու և տիրոջը հացանելու. Երբ պաշտօնեան գնում է որ և է օտարականի տուն, որի շունը հաջում է, պէտք է ծառային խնդրի, որ շանը հանգստացնի, Խթէ օտարականը հարկաւոր գործով պէտք է մի օտարականի մօտ գնայ, պէտք է այնպիսի ժամ ընտրէ, որ ոչ վաղ լինի, ոչ ուշ և ոչ էլ ճաշի ժամանակի. Քաջաքավարի պէտք է լինի, որ դուռը փակած ժամանակ ձայն չտայ, այլ պէտք է զանգը քաշէ, կամ զուան թակը զարնէ. իսկ եթէ ոչ զանգ ունի դուռը, ոչ էլ թակ, պէտք է մատով զգուշութեամբ բազմէ. Երբ ծառան դուռը բանայ, պէտք է հարցնէ ծառային. «Ցանն է արգեօք այս ինչ պարունը», որի հետ ուղում է գործ ունենալ. և եթէ տանն է, այցեսումն տայ. շեմը կոխելուց առաջ պէտք է ուսները մաքրի. իսկ սենեակ մօնելուց առաջ, մազերն ու մօրուքը սանրի, որովհետեւ քաջաքավիրթ ազգերի համար անկանն զգեստով ու անկարգ մազերով ներկայանալը վիրաբերականը է.

\* \*

Եւրոպական պետուրիւմների գօրերի վիճակագրութիւնը խաղաղութեան և պատերազմի ժամանակ:

Պետութիւնների մէջ զօրքերի շատութեան կողմից առաջին տեղը Ռուսաստանն է բռնում, որ խաղաղութեան ժամանակ 900000 հոգուց բազկացած բանակ ունի, Երկրորդ տեղը բռնում են Ֆրանսիան և Գերմանիան, որոնցից իւրաքանչիւրը 600000 զինուոր ունի. Աւստրո-Անգլարիան 375000, Իտալիան 300000, Անգլիան 275000, Եւրոպական պետութիւնների զինուորութեան ընդհանուում է 3,800000-ի:

Պատերազմի ժամանակ այդ թիւը կարող է հինգ կամ վեց անգամ կրկնապատճեւլ, Ռուսաստանի, Գերմանիան, Ֆրանսիան պատերազմի դաշտ կարող են հանել իւրաքանչիւրը 4 միլիոն զինուոր, Աւստրիան 2,425000, Իտալիան 2,225000,

Տաճկաստամբ 775000, Անդրիան 750000 մլն։ Եւրոպական բոլոր պետական թիվները միասին պատերազմի ժամանակ զինաւորի կարող են 21 մլիոնից առևլի։

Հետաքրքրական է տեղեկանալ նոյնպէս թէ որքան ծախս է նատում այդքան զօրքը պահելու համար խաղաղութեան և պատերազմի ժամանակ։ Մասնի շատութեան հողմից առաջին տեղը Անդրկան է բանում, որ զօրքի և նաւատորմից պահպանութեան համար գործադրում է տարեկան 1.100.000.000 ֆրանկ, Գրանիան ծախսում է 950 մլնն ֆր., Գերմանիան 900 մլն. ֆր., Աւստրիան 460 մլն., Իտալիան, 380 մլն. ֆր., Եւրոպական բոլոր պետութիւնները միասին խաղաղութեան ժամանակ զօրքի և նաւատորմի համար ծախսում են տարեկան 5.800.000.000 ֆր., Իոկնութէ բոլոր զօրքը զինաւորի կամենան տարեկան ծախս կլինի 32 միլիարդ, այսինքն օրական 100 միլիոն ֆրանկ։

\* \*

Անտվար մոլուսնեցը, Վերջին ժամանակներս նիւեկօրքի մաքսատանը ձերբակալու եցաւ Փարիզի վագեվիլ, թատրոնի նախկին գերասանուհիներից մէկը, որ մեղադրուում է 400 հազար դոլարի բրիլիանտներ առանց մաքսի փախցնելու համար, Խրամանի մաքսանենդը յաջողել էր շորս անգամ Եւրոպայից Ամերիկա գնալ և վերադառնալ խուսափելով մաքսատան ծառայողների ձեռքից միշտ հետեւալ անգամ միջոցը գործադրելով, Գերմանաւուհին ամեն անգամ մի մեծ շուն ունէր հետք, ինչպէս և վերջին անգամ։ Ինչպէս առաջ, այնպէս էլ այս անգամ մաքսանենդ արտիստուհուն հետախուզութեան հնմտարկեցին, լայց ունիչ զգը տան։ Սակայն ձերբակալութեան օրը շունը սատկեց և մաքսատան պաշտօնեաները կասկածի մէջ ընկան այն երեսյմից և վճռեցին ճգել շան փորք, բանից երեսց, որ պաշտօնեաների կասկածն ի զուր չէր, շան փորք լցուած էր աղամանեներու։ Գերմանաւուհին սովորութիւն է ունեցել Ամերիկայից հեռանալուց առաջ երեք օր իւր շանը սովոր պահել և ապա միի կտորների հետ կլանել էր տալիս թանգարին քարերի հատիկները, Հայրենիք գառնալով աղահ կլինը դժբաղդ կենդանուն կտրատում էր և ստամքսից թանգարին քարերը հանում։

\* \*

«Եւ երիսաներին մի կարի անգամ զիմի կամ ուրիշ պեղից խնիյի մի տուից»—Այս կոչումն է անում ծնողներին գերմանացի մի բժիշկի, որ երկար տարիներ մանուկների բուժարանի տեսուց է եղել։ Դրամալիմանը առաջ ուրիշ կարծիք ունէր։ Նա համոզաւած էր, թէ ճաշի ժամանակ մանուկներին կէս բաժակ գինի մատուցանելով՝ կարելի է ոչնչացնել նոցա մէջ երևան եկած թուլութեան, սակաւարինութեան հիւսնդութիւնը։ Բայց երկարաւե և ուշադիր զնուութիւնը բժշկին համոզեց, որ ընդհակառակն ոգելից խմիչք գործ ածող մանուկները

թեթև զրդիոից յետոյ՝ կորցնում են իրենց աշխատութիւնն ու զրօնելու ժամանակ վազելու ցանկութիւնը։ Հազարաւոր մանուկների վերայ անձնական փորձերս աչքի առաջ ունենալով՝ վճռական կերպով ասել եմ, որ մանուկներին ոգելից խմիչք տալուց ոչ մի օգուտ չեմ տեսել։ Բայց ընդհական սակն վկայ եմ իղել թէ ինչպէս ոգելից ըմպելիքները անմիջական կամ կողմնակի վնասակար հետեւանքներ են թողնում մանուկների մարմնի և հոգու վերայ։

\* \*

Վեճակագրութիւնը կարևոր նշանակութիւն ունի ինչպէս երկիր անտեսական վեճակը, այնպէս էլ բարոյականը ուսումնասիրելու համար։ Velkszeitung-ը հետեւալ թուանշաններն են բերում այլ և այլ պետութիւնների մէջ կատարուած մարդասպանութիւնների կամ նոյն նպատակով կատարուած փորձերի համար, Գերմանիայում 55 միլ. բնակիչների մէջ 530 հոգի դատի են ենթարկուում մարդասպանութեան համար, Գրանսիայում 38 միլ. 609, Սպանիայում 28 միլ. բն. 480, Իտալիայում 4000 հազարութիւն ունթարկուում 2000-2200 հոգի, Այդպիսով Խոսքին ոճրագործութիւններով յայտնի երկներից առաջինն է։

\* \*

Մեր ընթերցողներից շատերին յայտնի կլինի, որ հիւսիս արեմնեան Խտալիայում՝ ֆրանսիայի սահմանի վերայ գանուուած Մոնե-Կաւրլյ փորձիկ քաղաքը նշանաւոր է նորանով, որ ամեն տարի այնտեղ բազմաթիւ ճանապարհորդներ են հաւաքուում իրենց բաղդր վեճակախաղի մէջ փորձելու համար։ Իրաւամբ այդ քաղաքը «գժբաղդութեան վայր» կամ «վեճակախաղի գժոփիք» է կոչում։ որովհետեւ շատերը այդտեղ կորցրել են ոչ միայն իրենց գոյըը, այլ և իրենց կեանքը։ Են, լուի, Էշի տանը՝ թէպէս հաստատութիւնը անցեալ տարուայ համեմատութեամբ աւելի քիչ։ (24 միլ. ֆր., իսկ անցեալ տարի 27 միլ.) եկամուտ է ունեցել, բայց ինքնասպանների թիւը մեծ է քան անցեալ տարի։ Այս տարուայ ինքնասպանութիւնների թիւը 37 է, չհաշուելով բազմաթիւ «գժբաղդութեան գէպքերը», որ դարձեալ ինքնասպանութիւն պէտք է հասկանալ։ Մոնե-Կաւրլյի ինքնասպանները՝ սովորական գերեզմանատանը՝ Campo Santuում չեն թաղուում։ այլ մի առանձին հանգստարանում, որ Կampo infernale-է կոչում։ Ինքնասպանների գագաղներն ել զանազանուում են միւնքներից, շատ պարզ է այն, չորս անտաշ տախտակներից բաղկացած, որ մի նեղ հասարակ կառքի վերայ գրած՝ գիշերը հանգըտարան են տանում և թաղում։ Իրաւունք չկայ այդ գերեզմանատանը ինքնասպանների վերայ ոչ խաչ, ոչ արձան կանգնել, ոչ արձանագրութիւն գրել։ Մի սկզ ձողի վերայ նշանակուում է միայն ինքնասպանի նը, որ համապատասխան է հաստատութեան մէջ պահուած ինքնասպանների թուահամարին։ 1860 թուից մինչև այժմ՝ 2000 ինքնասպաններ թաղուած են Կampo infernale-ում։